# ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ըստ Բարձր Հրամանի Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց պատուէրի ամենից ուսուցչաց և ուսուցչուհեաց եկեղեցական ծխական ուսումնարանաց Հայոց, զի որք ընդ խրնդրագրութեանց իւրեանց յանուն Վեհափառ Հայրապետի չեն մատուցեալ զվկայականս ուսմանն իւրեանց յանցելում ամիս կամ ստացեալ են յետոյ, ի դէպս կարևորութեան այնոցիկ զվաւերացեալ պատճէնս նոցին պահեսցեն առ ինքեանս, իսկ զբնականսն անշուշտ փութասցեն մատուցանել Նորին Սրբութեան ընդ ձեռն Թեմական Առաջնորդաց ց 1 յառաջիկայ յուլիսի, նոյնպէս արասցեն և նոքա, որք յայսմհետէ ցանկասցեն ի ձեռս բերել զիրաւունս ուսուցչութեան յեկեղեցական–ծխական ուսումնարանս Հայոց։

Մամուլի տակից դուրս եկաւ «Ձայնքաղ Շարականը» և Յուսիկ Վ. Մովսէսեանցի «Դասատետր Կրօնի» Ա. Բ. և Գ. տարիները.

Ցանկացողները կարող են դիմել Տպարանական ժողովին Ի Ս. Էջմիածին. Въ Эчміадзинскій типографическій Комитетъ, въ Вагаршапатъ.